Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2015թ. ապրիլի 22-ի N88Ն
որոշմամբ

Մ Ե Թ Ո Դ Ի Կ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԱՃԱՌՔԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Սույն մեթոդիկայի համաձայն հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող հետևյալ կայաններից (այսուհետև՝ Կայաններ) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները.

1) բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, էլեկտրական էներգիա արտադրելու նպատակով ամբողջությամբ, մասնակիորեն կամ համատեղության կարգով չեն օգտագործում այլ անձանց պատկանող հիդրոկառույցներ և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2004 թվականի փետրվարի 9-ից հետո.

2) ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, ջրառն իրականացվում է ոռոգման համակարգերից և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2005 թվականի նոյեմբերի 8-ից հետո.

3) խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, ջրառն իրականացվում է խմելու ջրատարներից և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2005 թվականի նոյեմբերի 8-ից հետո՝ բացառությամբ խմելու ջրատարների վրա կառուցված այն փոքր հիդրոէլեկտրակայանների, որոնց կառուցման լիցենզիան տրվել է մինչև 2005 թվականի նոյեմբերի 8-ը.

4) հողմային էլեկտրակայաններ, որոնք էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2004 թվականի փետրվարի 9-ից հետո.

5) կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններ, որոնք էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2003 թվականի սեպտեմբերի 9-ից հետո.

6) սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով չնախատեսված փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք բավարարում են հետևյալ պայմաններին.

ա. փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի հունիսի 15-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» N 275-Ն որոշման 1-ին կետով հաստատված մեթոդիկայով հաշվարկելիս ստացվում է հավասար կամ գերազանցում է սույն կետի 1-ին, 2-րդ կամ 3-րդ ենթակետերում նշված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի տվյալ հաշվարկային տարվա սակագների մեծությանը և չի կիրառվել այդ մեթոդիկայի 3.4 կետը.

բ. առկա է լիցենզավորված անձի գրավոր համաձայնությունն առ այն, որ փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն ընդունվի հավասար սույն կետի 1-ին, 2-րդ կամ 3-րդ ենթակետերում նշված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի տվյալ հաշվարկային տարվա համար սահմանված սակագնի մեծությանը և հետագայում փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվի ու վերանայվի սույն մեթոդիկայի համաձայն:

2. Սույն մեթոդիկայի իմաստով՝ հաշվարկային տարի է համարվում օրացուցային տարվա հուլիս ամսից մինչև հաջորդ օրացուցային տարվա հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածը:

3. Սույն մեթոդիկայի համաձայն՝ սակագները հաշվարկվում են.

1) մինչև 2013 թվականի հուլիսի 27-ը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձանց համար՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից՝

ա. փոքր հիդրոէլեկտրակայանների համար՝ 15 տարվա ընթացքում.

բ. հողմային էլեկտրակայանների և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանների համար՝ 20 տարվա ընթացքում:

2) 2013 թվականի հուլիսի 27-ից հետո էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձանց համար՝ էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

ա. փոքր հիդրոէլեկտրակայանների համար 15 տարվա ընթացքում.

բ. հողմային էլեկտրակայանների և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանների համար 20 տարվա ընթացքում:

4. Հանձնաժողովը Կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները սահմանում և վերանայում է հետևյալ հաշվարկային բանաձևով.

$$T = T_1\left[K_1 * \frac{CPI}{100} + K_2 * \frac{R_1}{R_2}\right]$$

որտեղ՝

T -ն սահմանվող սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),

T_1 -ը գործող սակագնի մեծությունն է (դրամ/կՎտժ),

K_1-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման՝ սղաճի տեմպով պայմանավորված և ընդունվում է հավասար 0,35-ի,

CPI-ն Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա սպառողական գների ինդեքսն է նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

K_2-ը գործող սակագնի այն մասն է, որը ենթակա է ճշգրտման ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքի փոփոխմամբ պայմանավորված և ընդունվում է հավասար 0,65-ի,

R_1 – ը Հանձնաժողովի նիստին էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ որոշման նախագծի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փոխարժեքն է ընթացիկ տարում՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից,

R_2 – ը R_1 մեծության որոշման համար ընդունված ամսվան համապատասխանող ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին

ամսական փոխարժեքն է նախորդ տարում՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից:

5. Սակագների վերանայումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը: Վերանայման արդյունքում սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում տվյալ տարվա հուլիսի 1-ից, իսկ այն Կայանների համար, որոնցից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման որոշման գործողության 6 ամիս ժամկետը լրանում է տվյալ տարվա հուլիսի 1-ից հետո, ապա՝ այդ ժամկետից:

6. Եթե Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ընդունվում է՝

1) մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը, ապա սահմանվող սակագնի մեծությունն ընդունվում է տվյալ տարվան նախորդող տարվա հուլիսի 1-ից այդօրինակ Կայանների համար գործող սակագնի մեծությանը հավասար.

2) տվյալ տարվա հունիս ամսին, ապա սակագնի մեծությունն ընդունվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից այդօրինակ Կայանների համար գործող սակագնի մեծությանը հավասար:

7. Եթե սակագների սահմանումից կամ վերանայումից հետո R_1 մեծության և մինչև հաշվարկային տարվա նոյեմբերի 1-ը որևէ ամսվա ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փաստացի փոխարժեքի շեղումը կազմում է ավելի քան 15 տոկոս, ապա Հանձնաժողովը վերանայում է սակագները հաշվարկային տարվա հունվարի 1-ից՝ սույն մեթոդիկայի 4-րդ կետով սահմանված բանաձևում հաշվարկային տարվա հունվարի 1-ից ուժի մեջ մտնող սակագների հաշվարկման համար փոխելով միայն R_1 մեծությունը (բացառությամբ այն սակագների, որոնց գործողության 6 ամիսը չի լրացել): Այդ դեպքում R_1 մեծությունն ընդունվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դրամի միջին ամսական փաստացի փոխարժեքին հավասար:

8. Սույն մեթոդիկայի 7-րդ կետով սահմանված սակագների գործողության 6 ամիսը լրանալուց հետո դրանց հաջորդ վերանայման ժամանակ սույն մեթոդիկայի 4-րդ կետով սահմանված բանաձևում R_2 մեծությունն ընդունվում է հավասար R_1 մեծությանը: